

ՌՈՒԲԷՆ ՍԵՒԱԿԻ (1885-1915) ՄԱՍԻՆ ՆՈՐ ՅԱՅՏՈՒԹԻՒՆԵՐ

Միլիա Կապուտիկեանի «Խօսք իմ Որդուն»էն 50 տարիներ առաջ Ռուբեն Սեւակին գրած բանաստեղծութիւնը՝

«Բայց մայրենի անուշ լեզուդ
մի մտնար որ հայերէն է»

Յովհաննէս Չիլիկիտեան

Բողորին ծանօթ է թէ ինչպէ՛ս բարբարոս թուրքերը դարերու ընթացքին, և մինչեւ վերջերս, Հայկական պատմական յուշարձանները և եկեղեցիները, Հայերէն Հեռք չմնայ ըսելով ուժականով քանդած են: Բայց այս բարբարոսութիւններուն ենթարկուողները միայն Հայերը չեն:

Նոյնպէս Հնագարեան (Antique) յունական և բիզանդական յուշարձանները և եկեղեցիները զո՛ւ գացած են թրքական բարբարոսութիւններուն:

Աս թրքական քանդումին զո՛ւ գացող վայրերէն մէկն է Մարմարա ծովուն վրայ Միլիկի բերդաքաղաքը, որ կը գտնուի Պոլիսէն 65 քմ. դէպի արեւմուտք, Երոպական Թրակիոյ Հողամասին վրայ:

Նոյն ատեն Ռուբէն Սեւակի ծննդավայրը եղող Միլիկի բերդաքաղաքը, բուն անունով «Միլեմբրիա» Հին բիզանդական պատմական քաղաք մը՝ եղած է:

Միլիկի բիզանդական եկեղեցիները այնքան Համբաւ ունին եղեր, որ մեր Հօրեղբօր մեզի պատմաճին Համաձայն, մինչեւ 1914 թուականը Անգլիայէն բիզանդագետներ մասնատրապէս Միլիկի եկած են, որպէսզի Միլիկի բիզանդական եկեղեցիներուն խճանկարները ուսումնասիրեն:

Այսօր, պատմական Միլիկի բերդաքաղաքէն ոչ մէկ բան մնացած է: Ոչ բերդ, ոչ յունական յուշարձան, ոչ բիզանդական եկեղեցի և ոչ ալ բիզանդական խճանկար: Թուրքերը ամէն բան քանդած են: Եւ Միլիկի այսօր, անձոռնի, «պեթոն» կառոյցներով լեցուած, թրքական քաղաքի մը վերածուած է, և միացած է Պոլսոյ:

Միլիկի բերդաքաղաքը, որ մեր նախնիներուն բնակավայրը եղած է, մինչեւ 1922-ները, մեծ մասամբ բնակուած է յոյներէ և Հայերէ: Իսկ թուրքերը, Միլիկի մէջ, բերդաքաղաքէն դուրս՝ «վարի թաղամասը» (Asagi Mahalle) ըսուած շրջանը կը բնակին եղեր, գոյացնելով քանի մը տամնեակ թուրք ընտանիքներէ բաղկացած աննշան փոքրամասնութիւն մը:

Միլիկին այն աստիճան յունական քաղաք մը եղած է, որ Հոն բնակող Հայերը եղած են լաւ յունախօս, ինչպէս որ մեր Հայրը և մայրը սա՛Հուն յունարէն կը խօսէին:

Եւ այդ շրջանին Միլիկիի մէջ, նախակրթարան մը եղող «Աքանաղեան» վարժարանէն զատ և անէի բարձր Հայկական վարժարան մը չըլլալուն, Ռուբէն Սեւակ կը դրկուի Պարտիզակի Ամերիկեան Գոլէճը և յետոյ Պոլսոյ Պերպերեան վարժարանը, և 1905-ին ալ կը մեկնի Զուրիցերիոյ Լոզան քաղաքը, ուսանելու տեղւոյն բժշկական Համալսարանը:

Մինչդեռ Ռուբէն Սեւակին քրոջ աղջիկը՝ Ատրիսէ Յակոբովիչ Միլիկիի Հայկական վարժարանը աւարտելէ յետոյ, դեռ աղջընակ ըլլալուն, Պոլսոյ մէկ Հայկական վարժարանը չի դրկուիր, և Միլիկիի յունական միջնակարգ վարժարանը կ'արձանագրուի:

Եւ Ատրիսէ յունական վարժարանին մէջ շատ լաւ յունարէն գրել և կարդալ սորված ըլլալու ուրախութեամբ, իր մօրեղբօր, Ռուբէն Սեւակին 1910-ին Լոզան յունարէն լեզուով նամակ մը կ'ուղարկէ... Եւ Ատրիսէն միջոց մը յետոյ, Ռուբէն Սեւակէն պատասխան նամակ մը կը ստանայ:

Աստեղ կը Հրատարակէք Ռուբէն Սեւակի իր քրոջ աղջկան Ատրիսէին գրած նամակը:

Տեղին է նկատել որ Միլիա Կապուտիկեանի «Խօսք իմ Որդուն»էն 50 տարի առաջ գրուած Ռուբէն Սեւակի այս նամակ-բանաստեղծութիւնը մենք կը Հաւատանք, որ նաՀատակ բանաստեղծին ազգային Հոգեբանութիւնը վկայող և պատմական արժէք ունեցող գրութիւն մըն է: Ա՛հա Ռուբէն Սեւակի 1910-ին Լոզանէն Միլիկի իր քրոջ աղջկան Ատրիսէին գրած նամակ-բանաստեղծութիւնը:

Իմ սիրելի փոքր Ատրիսէ,
Ինձմէ բարձր ես Յունարեմէ.
Բայց հորդ, մօրդ քնքուշ լեզուն
Մի մտնար որ հայերէն է:

Եթէ միջոցը մերէ
Մեծ դպրոցներ գնա՛ Ատրիսէ.
Բայց մայրենի անուշ լեզուդ
Մի մտնար որ հայերէն է:

Օտյ մի ըլլար, օտյը աճօրեմ է.
Դուն շատ գիտում եղիր մեզմէ.
Բայց մայրենի և Մորք լեզուդ
Մի մտնար որ հայերէն է:

Լոզան 1910 Ռուբեն Սեւակ

